

ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանի ուղերձը Երիտասարդության միջազգային օրվա առթիվ

12.08.2015

Հարգելի Երիտասարդներ
Դուք եք այն հուսալի հերթափոխը, որ փոխարինելու է գալիս ավագ սերնդին հայրենաշինության, կյանքի զարգացման, Հայաստան-Արցախ-Սփյուռք միասնության ապահովման և կենսական նշանակության այլ խնդիրների լուծման ուղղություններում: Ձեզանից յուրաքանչյուրի ջանքերից, շնորհներից, նվիրումից է կախված մեր երկրի ու պետականության, հայ սերունդների ապագան: Սրտանց շնորհավորում եմ ձեզ Երիտասարդության միջազգային օրվա առթիվ, ցանկանում խաղաղ հայրենիք, աշխատանքային անսպառ եռանդ, անձնական երջանկությամբ ու հաջողություններով լի տարիներ: Ջերմ բարեմաղթանքներով՝ Գեղարքունիքի մարզպետ Ռաֆիկ Գրիգորյան